

ԽՐԻՄԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻԾ

I

Դ Է Պ Ի Վ Ե Ր

Ես սիրում էի բարձրանալ վերեւ,
Դէպի սարալանջ վաղորդեան գովին.
Այնտեղից դիտել երկինք ու արեւ,
Այնտեղից նայել ընդարձակ ծովին:

Այնտեղ իմ սիրած ընկուզենու սակ,
Թափե դալարում թարմ օդ շնչելով,
Ես գմայում էի, խոկում համարձակ,
Հոգով բնութիւնն համայն գրկելով:

Այնտեղ ե՛ւ սիրեն էր երազում ազաս,
Ե՛ւ ազաս օրհնում լոյս-երկնականաւ.
Խանդըս էր մառնու՛ր, շենչըս—անարա՛ւ,
Որպէս լեռների կուսական դալար:

Այնտեղ իմ միտքը—արծիւ սրբաթե՛ւ,
Իմ զգայմունքը—նման խո՛ւր ծովին...
Ա՛յս, ո՛րքան փաղք էր բարձրանալ վերեւ,
Դէպի սարալանջ վաղորդեան գովին:

II

Ա Ս Տ Ղ Ի Կ

Հարաւի լագուր երկնակամարում
Գիւերն հասնելիս՝ աչքս էր գրբաւում
Մի սիրուն աստղիկ... Նորան նայելիս,
Քե՛զ էի յիշում, ա՛յ իմ Նագելիս:

Եւ դո՛ւ էլ սրբիս երկնում գաղտիկ
Վառ շողում էիր, որպէս այն աստղիկ.
Ե՛ւ գիւերային անդորր հովանում
Քե՛զ հետ էր հոգիս անյագ զրոյց անում...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ